ՀՀ ԿԳՄՄՆ «Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
մանկավարժական խորհրդի որոշում

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ , ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԱՐԹԻԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՔՊ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՄՆ «Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ՝ ՀՀ ԿԳՄՄՆ «Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել ՀՀ ԿԳՄՄՆ «Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ՔՊ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ գործունեության կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ ԿԳՄՄՆ «Արթիկի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի
մանկավարժական խորհրդի նախագահ՝ Ա. Ա. Ղուլիջօղլյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՀ ԿԳՄՄՆ «Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի քաղաքացիական պաշտպանության շտաբի պետի (այսուհետ ՔՊ շտաբի պետ)աշխատանքային գործունեության

Ընդհանուր դրույթներ

Սույն կանոնակարգով ուղղորդվում և սահմանվում է քոլեջի ՔՊ շտաբի պետի աշխատանքային ընթացակարգը: Կանոնակարգի համար հիմք են հանդիսանում ՀՀ օրենքը «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին հոդված 17 կետ Բ», ՀՀ կառավարության (26.08.2010թ N 11 02-ՆԳ; 22.01.2015թ N 46-Ն; 13.11.2003թ N15 32-Ն) որոշումները:

ՔՊ շտաբի պետը՝

1. Քոլեջի ՔՊ պետի ղեկավարությամբ ստեղծում է քաղաքացիական պաշտպանության կազմավորման շտաբի հանձնաժողով և խմբեր:

2. Կազմում է շտաբային, օբյեկտային, համալիր ուսումնավարժությունների պլաններ և ներկայացնում է քոլեջի ՔՊ պետի հաստատմանը:

3. ՔՊ պետի հրահանգով մասնակցում է ՔՊ միջոցառումների ղեկավարման, կազմակերպման և իրականացման աշխատանքներին:

4. Քոլեջում իրականացվող ՔՊ միջոցառումների ժամանակ՝ ՔՊ պետին ներկայացնում է կատարվող ուսումնական փրկարարական, բժշկական վթարավերականգնողական աշխատանքների վերլուծական գնահատականները:

5. Քոլեջի դասախոսական կազմի, ուսանողների և սպասարկող օժանդակ անձնակազմի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում իրականացնում է ուսուցում՝

ա. իրավունքների, պարտականությունների և վարվելակերպի մասին ուսուցումը
բ. պաշտպանության միջոցներից օգտվելու կանոնների մասին ուսուցումը
գ. արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքների կատարման հիմունքների ուսուցումը.
դ. քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման հիմունքների ուսուցումը.

է. տուժածներին առաջին բուժօգնություն ցուցաբերելու եղանակների ուսուցումը.

զ. Փրկարարական, վթարային-փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, հրդեհաշիջման աշխատանքների կատարման հիմունքների ուսուցումը:

6. Շտաբային, օբյեկտային և համալիր ուսումնավարժանքների շրջանակներում համագործակցում է ՀՀ ԱԻՆ Արթիկի ՄՓՎ ՃԿԿ-ի հետ:

ՔՊ շտաբի պետ՝ Մ.Ֆեսչյան